նոյն եպիսկոպոսին լինի գոնցոլ Աքեայու հրովարտակաւ արքայի նոցին» (Դիւան, Գիրք Ժ. էջ 481)։ Պերութի մէջ կը վախճանի 1845 Հոկտ. 29ին, 64 տարեկան, և կը թաղուի Ամերիկեան գերեզմանատան մէջ։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԱՆԱՊԱՏՑԻ.—Մբ. կը միաբանակցէր 1840ին։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԱՐՄՏԱՆՑԻ.—Մբ. աշկ. Պրուսայի Սամուէլ արքեպ.ին. Նւ. Կեսարիոյ և Գաղատիոյ, իր հաշիւները ներկայացնելու համար կը վերադառնայ Երուսաղէմ. կ'ընտրուի Ս. Սեբաստիոյ, ուր կը մեկնի 1774ին հրովարտակով և կոնդակով. նոյն տարին եպս. կը ձեռնադրուի Ս. Էջմիածնի մէջ։ 1778ին կը կարգուի ընդհ. վանահայր Սեբաստիոյ և 25 տարի կը վարէ Ս. Նշան վանքին վանահայրութիւնը. կը հրաժարի 1799ին և իր տեղ վանահայր կ'ընտրուի Գրիգոր արքեպ. Գաղատացի. կը վախճանի 1801ին և կը թաղուի Ս. Նշան վանքին մէջ. իր պաշտօնավարութեան մանրամասնութիւնները տեսնել (Պ. Սեբաստիոյ. էջ 277—286)։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԲԱՂԻՇԵՑԻ.—Մբ. Նւ. Շղթայակիր պտրք.ի ժամանակ. իր յիշատակի մասին (տե՛ս ՄՁ. Թ. 532)։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԵԳԻՊՏՈՍԻ.—Մբ. 1822 ին կը պաշտօնավարէր Եգիպտոսի մէջ։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԵՐԶՆԿԱՑԻ.—Մբ. աշկ. Ամդեցի Մինաս պտրք.ի. 1696ին Նւ. Երուսաղէմի. իր հաշիւները կը ներկայացնէ Կարնոյ մէջ Մինաս պտրք.ին. 1699ին փոխանորդ Երուսաղէմի մէջ։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԵՒԴՈԿԻԱՑԻ.—Մբ. խորհրդական Ս. Յակոբի վանքին (1829—30). կը մեկնի Զմիւռնիա 1836ին։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԷՆԿԻԻՐԻՑԻ.— 1859 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբ։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԹԱՇՃԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.—Մբ. Ծ. 1878 ին. Զա. 1913 ին. ՏՓ. 1922 ին. ՏՑ. 1927 ին. ցարդ կը վարէ նոյն պաշտօնը։

ՅԱԿՈԲ ՎՐԴ. ԹՕԽԱՏՑԻ.—Մբ. Նւ. Թրակիոյ 1758 ին. կը վախճանի 1786 ին. այս անձը կը յիշատակուի ՄՁ. Թ. 406 յիշատակագրութեան մը մէջ։